

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ԷԳՄԻԱՅԻՆ ԴԱՌՆԱԼԸ

(Էջմիածնի հազարվեցհարիւրամեակի առթիւ)

1. Ս. Լուսաւորչին տեսիլքին համեմատ Վաղարշապատում էր հաստատուած Ամենայն Հայոց կաթողիկոսական Մայր Աթոռը, 303-էն մինչև 484 թ. մասց մինոյն տեղ Ս. Էջմիածնի կաթողիկունի մօտ, որ է 181 տարուոյ միջոց։ Յովհաննէս Մանդակունի կաթողիկուր Վահան Մամրիլոնեանի մարզպանութեան առթիւ աթոռը փախադրեց Դուին, որ յոյժ մօտ էր Ս. Էջմիածնի, և աթոռը իւր բնական կենտրոնէն հեռացած չէր նկատուէր, մինչև որ Յովհաննէս Դրամիսանակերտցի պատմաբան կաթողիկուր իւր վերջի օրերը փոխադրուեցաւ Վանայ կողմերը, իրը 898-ին, ըստ այսմ կաթողիկոսական աթոռը Դուին մնաց իրը 414 տարի։ Այնուհետև Զորովանք, Աղթամար, Արգինա, Անի, Ծամողա, Աեւել-լեռ և Հոռոմլա հետզհետէ կաթողիկոսութեան աթոռ եղան, մինչև որ 1293-ին հաստատուեցաւ Սոյ հայրապետանոցը, և այնտեղ մնաց աթոռը մինչև 1441, երբ նորէն Էջմիածնի գարձաւ։ Ուրեմն Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը 957 տարուոյ պանդխտութիւն մը ունեցաւ կջմիածնէ դուրս, կամ թէ միայն 543 տարի, եթէ Դուընայ հայրապետանոցը սեպել չ'ուզեմք։

Ս. Էջմիածնի հազարվեցհարիւրամեակի առթիւ յարմար կը դատեմք յառաջ բերել աթոռոյն վերադարձին պատմութիւնը՝ ժամանակակից աղքիւրներու վրայ ճշգուած։

2. Գրիգոր թ. Մուսաբէգեանց Սոյ աթոռոյն վրայ յաջորդած էր կոստանդին Զ. Վահկացւոյն 1439-ին, վասնգի նոյն տարուոյ նոյեմբեր 7-ին գրուած յիշատակարան մը կը յիշէ ար-

դէն Գրիգորի անունը (տես Փիրզալէմեանի Նոտարքը, երես 119): Սիմոն կաթողիկոս զանց կ'ընէ նրա անունը կաթողիկոսաց շարին մէջ (տես Սիմոնի Զամբռը, երես 17), բայց մենք պէտք է վստահօրէն ընդունիմք նրա անունը հիմնուելով Թովմաս Մեծոփեցիին ժամանակակից վկայութեան վրայ (տես Կ. Կոստանեանի հրատարակած Յիշատակարանը, երես 63): Գրիգորի անցեալը անձանօթ է բոլորովին. միայն սովորական դարձած մականունը գուշակել կու տայ թէ մեծ և ազդեցիկ տունէ էր և հաւանաբար Մովսէս Խշոնի մը զաւակ, որ օտար Տնչմամբ Մուսա Բէդ կոչուած կ'երիի: Ընտրութեան կանոնական պայմաններն ալ հարկաւ զանց եղած պիտի ըլլան, վասն զի նոյն իսկ ծխական օրէնքին պահանջած եպիսկոպոսներութիւը չը կայր. և ինքն պաշտօն ձեռք գցելէ ետքը անմիջապէս եօթը նոր եպիսկոպոսներ ձեռնադրեց իրեն հետեւղներ ճարելու համար (Կոստ. 63): Որչափ որ մեզի հասած հատուկը-տոր յիշատակներ կան, կը նկարագրեն Գրիգորը իրը անարժան այն աթոռոյն զոր գրաւած էր, և բազմադիմի մեղադրանքներուներք ինկած, զորս Մեծոփեցին կ'ամփոփէ բանլով. «Բաղայս անուղղայս եղեալ ունէր ի վերայ ինքեան» (Կոստ.): Հետեւաբար առանց վարանելու կարող ենք հետեւցնել, թէ երբ Կոստանդին Վահկացին վախճանեցաւ կամ սպանուեցաւ և աթոռը անկարգութեան մատնուեցաւ, և ամեն որ ըստ հաճոյս կաթողիկոսանալու հետամուտ կը լինէր, և մինչև իսկ Յովսէփի երէց մըն ալ յայտնապէս թեկնածու կը կանգնէր, Գրիգոր Մուսաբէգեանց իւր տոհմին և իւր գիրքին զօրութեամբ ազգեցութիւն շահեցաւ, և քաղաքական և օտար իշխանութեան օգնութեամբ աթոռին տիրացաւ:

3. Գրիգորի կաթողիկոսութեան գործներէն մեր գիրքերու մէջ բնաւ յիշատակութիւն չ'ունիմք, և ոչ իսկ անուղղակի ակնարկ մը կայ Փլորենցիոյ ժողովին վրայ, ուր գացեր էին Կաֆացի պատգամաւորները, և որք Եւգինէսո Դ. պապէն ընդունած էին Հայոց համար կոչուած Հրահանգը: Լատինական յիշատակներու մէջ զրուած կայ թէ Գրիգոր կաթողիկոս Հրահանգին յաջորդ տարին (այսինքն 1440-ին) Եղբայր Ալբերտոս անուն լատին կրօնաւորի մը ձեռօր թուղթ մը զրած է նոյն Եւգինէսո Դ. պապին, որուն մէջ կը յիշէ թէ իրենց ձեռքովը հասած է պապին զրածը, զոր կը կոչէ «արեգակնակացը և երկնանգէտ», և միանգամայն պապն ալ կ'անուանէ «բարեկարգիչ կաթողիկեաց ըստ ծիսի նախնի հարց» (տես Աղարեան Ստեփան վարդապետի լատիններէն հրատարակութիւնը պապութեան վրայ, երես 104): Այդ միակ յիշատակն է որ կրնայ մեկ-

նուել Եւզինէսի Հրահանգին վրայ, սակայն քանի որ բոլոր մեր աղջային զիրքեր ու յիշատակներ այդ Հրահանգին գոյութիւնն իսկ կ'անգիտանան, օրինաւորապէս կրնանք հետեցնել թէ. Գրիգորի անուամբ Եւզինէսի զրկուած գիրն ալ միենայն Կափայի հայերուն գործն է, որը իրենց Գենուայի տէրերուն ազգեցութեան ներքեւ և անոնց հաճելի երենալու զիտաւորութեամբ միաբանութեան գործ մը յարմարցուցին իրենց նախաձեռնութեամբ: Եթէ իրօք Գրիգոր այսպիսի բան մը բրած ըլլար, Արեելեան վարդուպեաները՝ որ անոր դէմ ամեն տեսակ ամբաստանութիւններ կը կազմէին, ինարկէ Լատինաց հետ միաբանութեան և յարաբերութեանց կէտն ալ կը յիշէին, իսկ բնաւ չը յիշելին զօրաւոր փաստ մըն է թէ Սոյ մէջ այսպիսի միաբանական յարաբերութիւն լսուած իսկ չէր:

4. Աւելի նշանաւոր կէտ մը Լուսաւորչի Ս.ջին կորսուիլին է, ժամանակակից յիշատակարան մը կը պատմէ թէ «յայսմ ամի» (որ է Հայոց ՊՂ. և Քրիստոսի 1441) դարձեալ յայլ իմն տատանումն հանդիպեցաւ Հայոց ազգիս, քանզի Ա.ջ սուրբ Լուսաւորչին մերոյ, որ կայր հիմի քանի ժամանակ, անյայտ եղե, ոչ գիտեմք թէ գողացան, և ոչ գիտեմք թէ ինքն զինքն ծածկեց. և ի մեծ նեղութիւն կան և ի տրտմութիւն Հայոց ազգս փասն այս պատճառի, և զկաթողիկոս Գրիգոր բազում չարչարցին և այլ եպիսկոպոսք ընդ նմա վասն Ս.ջին Լուսաւորչին և ոչ գախն զնա» (Փիրդ. 125): Յիշատակարանը 1441 տարուոյ մարտ 15-ին զրուած լինելով. Ս.ջին անյայտ լինելն ալ նոյն տարուոյ սկիզբները, կամ թէ նախորդ 1440 տարուոյ վերջերը պէտք է դնել: Ազգին մէջ հաստատոն համոզում մը գոյացած է, թէ Ս.ջին անյայտանալը արեելեան վարդապետներուն գործն է, որք երբ բանակցելով խորհեցան և կարգադրեցին կաթողիկոսական աթոռը Սիսէ Էջմիածին փոխադրել, նախ և առաջ գաղտնի կերպով Ս.ջը Սիսէ հանեցին, կամակցութեամբ իրանց համախոհ սսեցի եպիսկոպոսներուն, զիտնալով թէ ազգն անխախտ հաւատք մը ունէր, եթէ հայրապետական աթոռին վասերականութիւնն և զօրութիւնը Լուսաւորչի Ս.ջէն է, և թէ այնտեղ պէտք է ճանչնալ ճշմարիտ աթոռը, ուր կը գտնուի Լուսաւորչի Ս.ջը: Թէպէտ և տարբեր պատմութիւններ ալ կան Ս.ջին վրայ, և այսօր ալ Կիլիկիոյ Սթոռը ուրիշ կերպով կը պատմէ, սակայն ընդհանուր ազգին համոզումը չէ խախտուած, և անդսդին Հոռմլայեցի Ստեփաննոս կաթողիկոսի գերութեան ժամանակէն (1293-էն) սկսելով Ս.ջի պատմութիւն մը կայ պատմութեանց մէջ, որուն զանազան պարագաները ըստ պատշաճին պիտի յիշենք:

5. Կաթողիկոսական աթոռին Սիսէ էջմիածին փոխադր-
րուելուն առաջին գաղափարը պէտք է տեսնել այն միջամտու-
թեան մէջ, զոր արեելեան վարդապետներ Գրիգոր Տաթևացիին
գլխաւորութեամբ կատարեցին Աղթամարի գործին ժամանակ
(1409 ին), և Աղթամարի վիճակէն մաս մը գաւառներ բաժնե-
լով ենթարկեցին Սոսյ կաթողիկոսական աթոռին; Երբ դար-
ձեալ արեելեան վարդապետներու յանձնարարութեամբ Պօղոս
Քառնեցին Երուսաղէմէ Սիս գնաց և այնտեղ կաթողիկոսացաւ
(1418), դարձեալ Սրեելեայք կաթողիկոսական աթոռին նոր
ձե մը տալու խորհուրդէն շարժուած էին; Եւ իրօք ալ եթէ
կաթողիկոսական աթոռը իւր նախկին և բնական կենտրոնէն հե-
ռացած էր քաղաքական պահանջներու հետեանքով, հեռացումը
պէտք էր դադարէր, երբ քաղաքական պահանջները դադարած
էին կանուխէն; Մեծ փոփոխութիւններ թէպէտ և յանկարձա-
կան որոշմամբ մը գործադրուին, սակայն կանուխէն միտքերու
մէջ նախապատրաստուած կը լինին, և այս տեսակէն եղած է
անշուշտ կաթողիկոսական աթոռի տեղափոխութիւնն ալ; Մու-
սաբէգեանցի պաշտօնավարութիւնը պէտք էր որ ևսանդես
վատթարագոյն եղած լինէր, որ կանխաւ մտածուած խորհուր-
դը յանկարծ կրցաւ գործադրութեան անցնիլ; Մեծովեցին զա-
նագան մեղադրանքներ կը շարէ կիկիլիոյ մէջ նատող կաթողի-
կոսներուն վրայ, որոնց ժամանակը 147 տարի կը հաշւէ, և որ
Մուսաբէգեանցի դադարման թւականէն (1441) ետեւետե հաշ-
ւելով կը համանի ճիշդ Գրիգոր է. Անաւարդեցիին ընտրութեան
թւականը (1293), կամ որ նոյն է՝ աթոռին Սիս փոխադրուիլը;
Մեծովեցիին յիշած մեղադրանքները ասոնք են.—1. Քաղկեդո-
նականութեան հետեւնին; 2. Վեց կաթողիկոսներու հետք-
հետէ գեղակուր սպանուիլը; 3. Կաթողիկոսներուն բռնութեանց
երեսէն շատերուն ուրացութեան դիմելը, ուր յանուանէ կը յի-
շուի Յակոբ Նիկիտացի մը կոստանդնինի ժամանակ; 4. Պիղծ
կեանք անցնեխին; 5. Լոկ ձէլով միւռոն պատրաստենին; 6.
Սիմոնական ձեռնադրութիւններ ընելին; 7. Նոյն վիճակի վր-
քայ միենոյն ատեն երեք չորս եպիսկոպոսներ ձեռնադրել-
նին; 8. Անարժանները պաշտօնի կոչելինին; Ասոնց ետեխն
կը յարէ ևս իսրայէլի օրինակը, Ներսէս Մեծի գուշակութիւնը
և Սահակ Պարթևի տեսիլը (Կոստ., 55—60):

6. Դժուար է ճշտել, թէ ով եղաւ այսպիսի նշանաւոր ե-
ղելութեան գլխաւոր գործիչը. Ժամանակը չը ներկայեր մնզ այն-
պիսի մի բարձր անձնաւորութիւն, որ իւր անունով դար մը
կը կազմէ; Բայց ինչպէս ըսմնք, խորհուրդը նոր չէր, և ահա
չորս կիլիկիացի եպիսկոպոսներ, որոնց անունները գժբաղդա-

բար յայտնի չեն, մեղագրական գիրեր սկսան հասցնել որեւել-
եան վարդապետներուն, թէ մինչե երբ անհոգ պիտի մնան և
անակ անօգնական պիտի թողուն Հայոց հայրապետութիւնը:
Թովմաս Մեծոփեցին գործը լուրջ նկատողութեան առնողներէն
մէկը եղաւ, և ժողով մը գումարելու և գործը կարգագրելու ա-
ռաջարկը կազմուեցաւ (Կոստ., 64): Այդ խորհուրդը տեղի ու-
նեցաւ Մուսաբէգեանցի ընտրութենէն քիչ ետքը (1440), և ան-
միջապէս Սրեւեայց և Կիլիկիցւոց մոջ խորհրդակցութիւններ
և բանակցութիւններ սկսան: Նոյն ինքն Գրիգոր Մուսաբէ-
գեանց ալ խորհրդակցութեանց մասնակից գտնուեցաւ, և հրա-
ւիրուեցաւ Սիսը թողլով Էջմիածին փոխադրուել և Սրեւեայց
գործակցութեամբ Հայրապետական աթոռը գօրացնել (տես
Զամշեանի Հայոց պատմութիւն, հատոր Գ., երես 486): Տարի մը
անցաւ այդ պատրաստութիւններով (Կոստ., 65), և ապա Յով-
հաննէս Կոլտուիկ առաջնորդ Հերմոնի վաճուց, որ ժամանակին
մէծ վարդապետներուն զիսաւորն էր, իւր հրաւիրագիրերով
ծանոյց ժողովի մը գումարումը Վաղարշապատի մէջ, և այդ
նպատակով կանուխէն ալ ստացաւ Երեւանի կուսակալ Եպօղուք
Բէզի հաւանութիւնը:

7. Ժողովականներուն թիւը «աւելի քան զերեքհարիւր
անձինս» կը դնէ Մեծոփեցին, իսկ աշխարհականներուն թիւը
«անթիւ և անհամար բազմութիւն» կը կոչէ (Կոստ., 53), մինչ
ուրիշ յիշատակարան մը եօթնարիւր կը հացնէ գումարուած
եկեղեցականներուն թիւը (Փիրզ., 133, Զամչ., Գ., 487): Անու-
նով նշանակուած են 18 մէծ վարդապետներ, 12 եպիսկոպոս-
ներ, և գարձեալ 20 ես նշանաւոր վարդապետներ և եպիսկո-
պոսներ գրաւոր հաւանութիւն զրկած են: Յիշուածներուն
մէջն են Արտազու եպիսկոպոս Գրիգոր, Տաթեու եպիսկոպոս
Շմաւոն, Հաղբատու եպիսկոպոս Գրիգոր, և Բցնոյ եպիսկոպոս
Յովհաննէս, որոց հաւանութիւնը կաթողիկոսական ընտրու-
թեանց համար իբր անհրաժեշտ պայման ընդունուած էր գարերէ
իվեր: Յովհաննէս Հերմոնեցին իբր ժողովին զլուխ նկատուած էր,
Թովմաս Մեծոփեցին էր մէծ գործիչը, Զաքարիա Հաւուցթա-
ռեցին եպիսկոպոսներուն երիցազոյնն էր, ուրիշ շատ անուն-
ներ ալ ծանօթ անձնաւորութիւններ էին: Հրաւիրեաններ ամեն
կողմերէ նախ Երեւան հրաւիրուեցան, Եաղուք Բէզէ պատւա-
սիրուեցան և քաջալերուեցան, զինուորներու պաշտպանու-
թեամբ, փողերով ու թմբուկներով Վաղարշապատ եկան (Կոստ.,
68): Թէպէտ և շատ որոշակի գրուած չէ: սակայն դիւրահնար
է ձշտել թէ ժողովը հրաւիրուած էր զատիչն եաքը հաւաբուե-
լու և գումարուեցաւ համբարձման մօտ: Մեծ պահքին մէջ

(1441 մարտ 15-ին) տակաւին Մուսաբէգեանց երրե՛ կաթողիկոս կը յիշուի (իրդ. 125), իսկ հոգեգալուստի օրը (1441 յունիս 4-ին) արդէն ամեն բան վերջացած է, և միւռոնի օրհնութիւնը կը կատարէ նորընտիր կաթողիկոսը (Կոստ. 74):

8. Եթէ Մեծոփեցին մտիկ ընենք, ժողովականներ այսպիսի առաքինական և խոնարհ հոգւով զգացուած էին, որ «բաղումք ի յեղբարցն յառաջ կոչեցան գալ ի յառաջնորդութիւն Թորգումեան զրոհիս, և ոչ կամեցան բառնալ զծանրութիւն գառնութեան բարձրագոյն աստիճանին» (Կոստ. 69), և հետապէս հարկ եղաւ ազօթքի դիմել և Ս. Մեարոպի գերեզմանին ուխտի երթալ Օշական, և ասոր անոր և մինչև իսկ այլազգի կոնց տեսած երազներուն իմաստները զննել, և ի վերջոյ «արկանել վիճակ ի սուրբ աւետարանն» (Կոստ. 72), և այսպէս որոշել կաթողիկոսութեան ընդարելին: Սակայն եթէ միտ զնենք ժողովին զիմաւորներուն և ի մասնաւորի Արտազու Գրիգոր և Հաւուցթառայ Զաքարիա եպիսկոպոսներուն և Աղթամարայ Զաքարիա կաթողիկոսին ընթացքին և գործերուն և ընտրութենէ ետքը զրգուած ողբալի դժատութիւններուն, յայտնապէս կը տեսնուի, թէ ասոնք հաւասարապէս հետամուտ էին կաթողիկոսութեան, և երբ իրարու գէմ վարած հակառակութիւններուն հասնելու յոյսերնին կտրուեցաւ, լաւագոյն սեպեցին ամենքն ալ ետ քաշուիլ, և փոխանակ վարչական կարողութեամբ օժտուած անձ մը կաթողիկոսութեան բարձրացնելու, որբակրօն ճգնազգեաց վարքով փայլած անձ մը ընտրեցին, ամեն փառասէր կիրքեր կը լուէին և ամենքն ալ հաւասարապէս կրնային ընդունել սուրբ անձի մը իշխանութիւնը, և ժամանակին իրենց փառասէր ձգտումներուն յաջողութիւնը:

9. Դիտելու արժանաւոր կէտ մըն ալ Աղթամարեան ուղղութեան ազգեցութիւնն է: Խամաւորագոյն ժողովականներու շարքին մէջ կը գտնիմք Մեծոփեցի, Խառաբաստեցի, Վարագցի, Արծկեցի, Աշտունի և այլ վանքերու վարդապետներ, որը նոյն առեն կամ քիչ առաջ Աղթամարի աթոսին կը պատկանէին: Թովմա Մեծոփեցին այդ խմբակին պետք՝ միանգամայն տեղափոխութեան զիմաւոր դրզին էր: Իսկ Տաթեացի կամ Սիւնեցի վարդապետաց խումբն ալ տակաւին թարմ ունէր իր միաքին մէջ Գրիգոր Տաթեացին ըրածը, որ Աղթամարի սահմանները զայցած էր և նոյն աթոսին օգտին աշխատած էր: Աղթամարի աթոսին վրայ կը գտնուէր Զաքարիա, ժամանակին կարողագոյն անձերէն մին, որ տեսնելով կիլիկիոյ աթոսին անկումը կը ճգնէր նրա խափանմամբ իր աթոռը ամենայն հայոց հայրա-

պետութեան բարձրացնել և էջմիածինն ալ գրաւելու Վասպուրականցիք և Սիւնեցիք Աղթամարի և Տաթեի աթոռներուն փոփոխ բարեկամութեան չնորհիւ կը մտածէին անշուշտ ազգին Եկեղեցական խաղաղութիւն մը պարզեցել Կիլիկիան խափանել, Աղթամարը էջմիածին փոխադրել և կաթողիկոսական աթոռին պառակաման սերմերն ալ ջնջել Գիտենք որ Աղթամարի Զաքարիան համամիտ էր Վաղարշապատու ընտրութեան և իւր աթոռն ալ անոր ենթարկելու հաւանութիւն տուածէր, իհարկէ իր փառասիրական ձգտումներէն առանց կէտմը զոհելու: Մեր այս գիտողութիւնները առաւել հաստատութիւն կ'առնեն էջմիածնի նորոգեալ աթոռին մէջ տեղի ունեցած երկպառակութիւններէն, ինչպէս պիտի պատմեմք: Հարկաւ գիտուածով ալ չէր որ երբ կիլիկեան կուսակցութիւնը իրը Աղթամարական կը մեղադրուէր, էջմիածնական նոր կուսակցութիւնն ալ իրը Աղթամարական սկսաւ մեղադրութիւն:

10. Էջմիածնի մէջ ընտրուած նոր կաթողիկոսի վրայ խօսելու չը սկսած Մուսաբէգեանցի վրայ խօսքերնիս վերջացընենք, Զենք գիտեր թէ ինչու Գրիգոր չուզեց համակերպել իրան եղած հրաւերին և չը գնաց էջմիածին, թէպէտև Մեծոփեցին, և ունդուն աղթամարականնը, չը յիշէր այդ առաջարկը, գուցէ աղթամարականներու զիջողութիւն ըրած չ'երևալու համար, Գրիգոր եօթը եպիսկոպոսներ ձեռնազրած էր, և ասոնցմէ չորսն էր հաւանորէն՝ որ իրեն դէմ Արեւելեայց թմբրութիւնը արթնցուցին: Այս չորսները ուրիշ հետևողներ ալ ունեցան հարկաւ, և Մուսաբէգեանց իրեններէն ալ լքուած մնաց անօգնական և իրօք և իրաւամբ կաթողիկոսութենէ զրկուած: Ինչպէս պիտի յուցնեմք, Վաղարշապատու ժողովական որոշումէն եաքը (1441 յունիսին) հնար չէ այլ ևս Մուսաբէգեանցը իրեւ օրինաւոր կաթողիկոս ճանչնալ: Միւս կողմանէ կ'երեի թէ ինքն ալ երկարակեաց չ'եղաւ անկէ եաքը, և բնական կամ բննական մահուամը շուտով գախճանեցաւ Կիրակոսի կաթողիկոսութեան առաջին տարին, և կիլիկիոյ աթոռն ալ որ իրաւամիտ դադրած էր, իրապէս ալ աթոռակալ չ'ունեցաւ, և հինգտարի խափանեալ և առանց գահակալի մնաց Սսոյ կաթողիկոսարանը: Այդ միջոցին նոր խլուսումներ սկսաւ Յովսէփ երէցը որ Մուսաբէգեանցէ առաջ ալ կաթողիկոսանալու ջանքեր ըրած էր, բայց այս անդամ ալ ապարդիւն մնաց, և Սսոյ աթոռն ալ գատարկ մնաց մինչև Կարապետ Եւգուիացիի կաթողիկոս հոչակուիլը, այլ մեք սկսենք նորընտիր կաթողիկոս Կիրակոսի վրայ խօսիլ:

11. Կիրակոս հայրենեօք Քաջբերունի էր, Արճէլ զաւառի հառաբաստ դիւզէն և Խլոնց տունէն, տղայութեան աշակերտած Աղթամարի և յետոյ Խառաբաստու կամ Սուխարու վանքին մէջ Սարգիս Ապրակոնեցի և Վարդան Սուխարեցի մեծ վարդապետներուն ձեռքին տակ (1389 էն 1406): Այս հաշով Կիրակոս իբր երեսուն տարեկան եղած ատեն վանական կամ կուսակրօն քահանայ օծուած է Արճէչի Զաքէոս եպիսկոպոսէն (1397 ին), և այն օրէն խստակրօն կեանք մը սկսած է, միւէ և կիթէ և զինիէ ժուժկալելով, սրբարերան և սրբակրօն (Կոստ. 54), և բոլոր ազգին մէջ հոչակուած իբր Փխաչակրօն խարազնազգեաց ճգնաւորն (Կոստ. 61): Կիրակոս վարդապետ անունով չը յիշուիր երրէք, զի այդ անունը պահուած էր ի նախնումն միայն անոնց, որք ուսումնական բարձր զարգացմամբ և երկարատե վաստակով ծայրագոյն վարդապետութեան աստիճանին կը հասնէին, մինչ Կիրակոս աւելի ճգնաւորական կեանքով համբաւ ստացած էր: Վանական քահանայութիւն ընդունելէն 12 աարի ետքը (1409-ին), թողուց Կիրակոս իւր հայրենի երկիրը, երբ Սուխարու միաբաները ցրուեցան ասպատակութեանց երեսէն, և Վարդան վանահայրն ալ վախճանած էր կանուխէն (1406-ին) Սալինապատի վանքին մէջ: Կիրակոս առանձնութեան սիրով եկաւ Խոր-Վիրապի վանքը, և այնտեղ փայլեցաւ իւր ճգնազգեաց կեանքով, և անկէ ստայաւ Վիրապեցի մականունը: Սակայն «Լուսաւորչի կենդանաթաղ գերեզման»-ին տեղն ալ գիւրակեցութեան վայր կարծելով, այն ալ թողուց և քաշուեցաւ Վանաստանի անապատը, որ ամայի ճըդնա սուն մըն էր Մասիսի ստորոտը Ակոսի զիւղին մօտ: Այդ տեղ ազօթքով և ընթերցումով կ'անցնէր Կիրակոս իւր ժամանակը, ամհազորդ՝ գուցէ և բոլորովին անզիտակ Վաղարշապատի մէջ կատարուած գործերէն, երբ «միաբանութեամբ և ընտրութեամբ Հոգւոյն Սրբոյ, տեսլեամբ գիշերոյ և յանուրջս երազոյ, հաւանութեամբ ամենայն Հայկազեան գաւառի, ազօթքով և բարեխօսութեամբ ամենայն սրբոց» (Կոստ. 52) կոչուեցաւ ի հայրապետութիւն Ամենայն Հայոց: Աեւտարանով վիճակի պարագայն ալ կայ զոր անգամ մը յիշեցինք (Կոստ. 72), որուն թէպէտ մանրամասնութիւնը բացատրուած չենք գտներ, սակայն խնդիր լուծելու այդ միջոցը նոր և անսովոր չը լինելը յայտնի է:

12. Բարինք արգէն թէ Կիրակոսի ընտրութիւնը զօրաւոր հետամուտները լսեցնելու կերպ մէն էր, քան թէ հետամուտ չը գտնուելուն փաստը մը: Էնդհանրապէս կը կարծուէր թէ Կիրակոսի նման աշխարհէք վախչող և անապատաստն եօթա-

նասնամեայ ծերունի մը պիտի դժուարէք յանձն առնուլ հայրապետական պաշտօնը, «զի կարի անհնազանդ բարս ունէք և ատէք գիտաս երկրաւորս». ուստի և մեծ եղաւ պանչացութը և ամենքը «հիացեալ զարմացան զնազանդութիւն առն Աստուծոյ և չթողուլ կամաց իւրոց», երբ տեսան որ «առանց հակառակութեան եկեալ կանգնեցաւ ի մէջ ահագին ատենին» (Կոստ. 93): Աստուծային կամքին առջև խոնարհելով, կամ թէ ձարտար անձերու խորհուրդներուն անսալով, չենք գիտեր, սակայն կիրակոսի յանձնառութիւնը փերջացուց ամեն խնդիրները, որոնց համար մէկ կողմէն ուխտերու և միւս կողմէն երազներու գորութեան դիմած էին բարեմիտ ժողովականները: Կիրակոս՝ եպիսկոպոս և վարդապետ չէր, հետեաբար հարկ եղաւ նախ եպիսկոպոսական ձեռնադրութիւն և վարդապետական գաւագան տալ (Կոստ. 79), և ապա 12 եպիսկոպոսներու գործակցութեամբ կաթողիկոս օծել, որոնց առաջինն էր Զաքարիա Հաւուցաւեցին իբր երիցագոյն, և հաւանաբար այս 12 եպիսկոպոսներն են, զորս Մեծովեցին յանուանէ կը յիշէ՝ «Երկուսաւան եպիսկոպոս աստի և անտի» ըսելով (Կոստ. 52): Կաթողիկոսական օծումէն անմիջապէս յետոյ, հոգեգալթուսաթի օրը (1441 յունիս 4-ին) մեծահանդէս ժողովով օրհնուեցաւ «աստուծագործակ միւռոնն»: և կանոնեցաւ «Ճրի տալ և Ճրի առնուլ ըստ նմանութեան առաքելական գնդին» (Կոստ. 94), և այդ ամեն եղաւութիւնները ազգին հաղորդելու համար» կիրակոս ծառայիցն Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի, ողորմութեամբ և նորին կաթողիկոս աթոռոյ Սրբայն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և Վաղարշապատու սուրբ Եջմիածնի և ամենայն Հայոց», պաշտօնական կոնդակներ արձակեց ամեն կողմեր, և հայրապետական աթոռին իւր ընական կենարունին մէջ վերահաստատուիլ աւետելէ և կարենոր հրամանները տալէ յետոյ ընդհանուր ներում և արձակում շնորհեց ամենայն կապանաց և բանադրանաց և նղովից, որք ի ժամանակս, և մանաւանդ վերջին տարիներու մէջ արձակուած էին կիլիկիա նսաող կաթողիկոսներէն, սկսելով այն նղովիցն զոր Աղթամարի Դաւիթ Թոռնիկեանին գէմ արձակած էր Գրիգոր Գ. Պահլաւունին Սեւելեռին ժողովին մէջ (1113-ին): Այդ կոնդակները զրկուեցան նաև մասնաւոր կաթողիկոսներու, այսինքն է Աղթամարի կաթողիկոս Զաքարիայի, Աղուանից կաթողիկոս Գրիգոր Հաւուցի, և Սոյ կաթողիկոս Գրիգոր Մուսարէկեանցի (Զամշ. Գ. 488): Այդ վերջինին անուան յիշատակութիւնը բաւական է ցուցնել թէ կիլիկիյի եպիսկոպոսներուն հետ Մուսարէզեանց

ինքն ալ, գոնէ լրելեայն յանձնառու եղած էր՝ Վաղարշապատու ժողովին որոշումները յարգել:

13. Սթոռի տեղափոխութեան գործը թէպէտ ազգին մէջ ընդունուած մի կէտ է և ազգը բովանդակ էջմիածինը կը ճանչնայ իբր իւր Մայր Աթոռը և առաքելական յաջորդութեան շարունակութիւնը, սակայն եղան տակաւին տարրեր կարծիք ունեցողները Սյս կարգէն եղան երբեմ, կիլիկեցիներէ ոմանք, որք թէպէտ ոչ հաստատապէծ և ոչ իբր սկզբունք, այլ երբ խնդրոյ կամ վէճի առիթ ծագեցաւ, յանկարծ մէջ տեղ նետեցին տեղափոխութեան խնդիրը, իբր ոտից կոռւան ուրիշ պահանջներու համար: Սյտ կարգէն եղան ևս հայ հոռվմէական-ներէն ոմանք, որպէսզի կարող լինին կիլիկիոյ աթոռին իրաւոնքով պաշտպանել իբրենց կաթողիկոսի անուն կրող աթոռը, որ վերջին ժամանակներու մէջ (1742-ին) ստեղծուեցաւ պարզապէս պապական հաստատութեամբ, իբր այն թէ պապերէն կաթողիկոս կոչուած Արքահամ Արծիւեանը ուղղակի յաջորդ լինէր կիլիկիոյ աթոռին, և կիլիկիոյ աթոռն ալ հարազատ յաջորդութիւն ամենայն հայոց առաքելական հայրապետութեան, և հոռվմէականներուն անուանեալ կաթողիկոսը լինէր յաջորդ Ս. Գրիգոր Լուսաւորչին և Առաջին Լուսաւորիչներուն: Սյտ է բուն նպատակը երբ հոռվմէականք կիրակոս Վիրապեցին հակաթոռ մը կ'անուանեն (անս Հստակրեանի եկեղեցական պատմութիւնը, երես 248): Հոռվմէականներուն նկատմամբ բան մը ըսել աւելորդ է, քանի որ կիլիկիոյ աթոռը հարազատ յաջորդութիւն ընդունելով հանդերձ, երենց կարծեցեալ կաթողիկոսութիւնը հարազատ յաջորդութիւն չը լինիր, քանի որ կիլիկիոյ շարունակեալ յաջորդութիւնը մինչև այսօր կը պահուի: Իսկ կիլիկեցւոց ոմանց կարծիքն ալ գործնական արդիւնք չունի, քանի որ Երուսաղէմի ժողովով (1651-ին) երկու կողմեր պաշտօնական համաձայնութիւն գոյացուցին, և էջմիածնի աթոռը ամենայն հայոց հայրապետութիւն ճանչցուեցաւ անհակառակ, և կիլիկիոյ աթոռն ալ անոր գերադասութիւնը ճանչցող մասնաւոր կաթողիկոսութիւն մը, և ինչ որ անկէ առաջ կամ յետոյ գործուեցաւ կը մնայ անհատական և անցաւոր գործութիւն, որ եկեղեցական յարաքերութեանց հիմնական և իրաւաբանական կացութիւնը չ'այլայլեր:

14. Սակայն խնդրոյն վրայ տեսութիւն մը ընելու և պատմութեան պահանջը լրացնելու համար պէտք է դիտել տալ, թէ ստուգիւ կիլիկիոյ աթոռը Ամենայն հայոց հայրապետութեան օրինաւոր յաջորդութիւն էր մինչև Գրիգոր Մուսարէգեան, և օրինաւոր յաջորդութիւնը չ'եղաներ կաթողիկոսներէն ոմանց Ցուլիս, 1903:

և մանաւանդ վերջիններուն տարօրինակ ընթացքով և անարժան գործերով: Կաթողիկոսներէն ումանք ի հաւատոյ ալ թերանալով և Հայաստանեալց եկեղեցւոյ անբիծ դաւանութեան նուիրական աւանդն ալ եղանելով, աթոռին օրինաւորութեան վեաս մը չեն բերեր, քանի որ մեր եկեղեցւոյն միաբէն իսկ անցած չէ իւր հայրապետները անսխալական հոչակելի Ընդհակառակն եկեղեցին իւր ընդհանրութեան մէջ իւր վրայ իշխանութիւն կը ճանչնայ իւր կաթողիկոսներն ալ դատելու, և ինչպէս ընտրելու և պաշտօնի կոչելու, նոյնպէս պաշտօնէ զրկելու իրաւունքն ալ կը ճանչնայ իր վրայ: Այդ կէտք յայտնի եղած է Վահան Սիւնիի աթոռապետներութեան առթիւ, ինչպէս նաև որիշ կաթողիկոսներու նկատմամբ կատարուած պաշտօնական քննութիւններուն մէջ: Նոյն սկզբունքով վարուեցաւ Վաղարշապատու ժողովը, երբ եկեղեցւոյ ամենակարենոր մի խնդրոյն և ամենանշանաւոր մի պարագային առջև վճռեց և որոշեց աթոռը վերահաստատել իր կենտրոնին մէջ, վերադարձնելով զայն իւր պանդիստութեան տեղէն. ուր երկրորդական և պատահական պարագաներու պատճառով տեղափոխուած էր, եւ որովհետւ Գրիգոր Մուսարէկեանց չ'ուզեց փոխադրուել, կամ թէ որովհետւ Գրիգոր Մուսարէկեանց արժանի չը դատուեցաւ փոխադրուել, հետևապէս ժողովական վճռով պաշտօնէն և աթոռէն զրկուեցաւ, և նոր ընտրութիւն կատարուեցաւ, և կիրակոս Վիրապեցի ընտրուեցաւ և օրինաւորապէս կաթողիկոսացու: Վերագոյն ակնարկեցինք թէ հաւանաբար Մուսարէկեանց ալ հաճութիւն տուած էր այդ տեղափոխութեան, ինչպէս կը գուշակուի կիրակոսի կոնդակէն առ Մուսարէկեանց, բայց որովհետւ այդ պարագոյն պատճական կերպով ըստ ամենայնի հաստատուած չէ, մենք չենք ուզեր երկբայական կէտք մը վրայ հիմնել կաթողիկոսական աթոռոյն տեղափոխութեան խնդրու, և մեր կացութեան օրինաւորութիւնը կը հաստատեմք, ենթագրելով իսկ որ Մուսարէկեանց հաւանած չը լինի գործուած տեղափոխութեան:

15. Աւելի դիւրին է ցուցնել թէ Վաղարշապատու ժողովը օրինաւոր և լիակատար ազգային ժողով մը եղաւ: Եօթն հարիւր եկեղեցականներու, և ասորմէ երեք հարիւր գլխաւոր եկեղեցականներու ներկայութիւնը, արքէն պատկառելի թիւ մըն է լիակատար ազգային ժողով կազմելու: Ներկայ չեղող գլխաւոր եղիսկոպոսներէն և մեծ վարդապետներէն շատեր և զրեթէ բոլորներ իրենց հաւանութիւնը գրով զրկած են: Աշխարհական իշխաններու և գլխաւորներու անհամար բազմութիւնը առաւել ևս ճոխացուցած է ազգային կամքին արտայայտութիւնը: Սրտագու, և Տաթեռու, և Հաղպատու, և Բշոյ գահականներ, որք նախ-

ընթաց ժողովներու որոշմամբ լիազօր իշխանութիւն ստացած էին կաթողիկոսական ընտրութեանց վերջնական հաստատութիւն տալու, անձամբ ներկայ եղած են: Աղուանից կաթողիկոսութիւնը, որ Հայոց աթոռին ենթարկեալ ճիւղ մըն է, ըստ ամենայնի համաձայնուած է: Աղթամարայ աթոռը, որ ժամանակէն իր ներեալ և Վասպուրական նահանգին վրայ ընդարձակ իշխանութեամբ Հայաստանեայց եկեղեցւոյ մի նշանաւոր մասը կը կազմէր, ըստ ամենայնի հաճած և գործակցած է: Եւ եթէ այդ համաձայնութեան մէջ շահադիտական նպատակ ալ ունեցած է, սակայն երբէք գործին բարեյացող աւարտման վեասած չէ: Տաթիւու կամ Սիրնեաց գարդապետանոցի մեծ աշակերտութիւնը, որ բոլոր ազգին մէջ բարոյական ազգեցութիւն ստացած ունէր, իւր ամբողջութեամբ այդ գործին մասնակցած է, նոյն ինքն Կիլիկիոյ եկեղեցականութիւնը իւր չորս եպիսկոպոսներուն բերնով առաջին շարժիչը եղած է այդ մեծ գործողութեան, և եթէ այսպէս ըստի իդէպ է, առաջնութեան պարծանքը ստացած է, մինչև վերջ ալ համաձայն մնացած է: Կիլիկիոյ աթոռին Մուսաբէգհանցի մտհուանէ յետոյ հինգ տարի շարունակ մինչև Կարապետ Եւգոնիկացին դադրած մնալը ևաքնդես կը հաստատէ Կիլիկիցւոց ազգին ընդհանրութեան նետ համամիտ և համակարծիք լինելը: Հետեաբար Վաղարշապատուժողովին ազգին ամբողջութեան ներկայացուցիչ և լիակատար ազգայիշ՝ ժողով լինելը երբէք երկբայութեան ներկե չը կրնար մնալ: Եթէ մտածելու կէտ մը կայ, այն ալ Վաղարշապատուժողովին մեծ գործիչներուն շուտով իրենց կատարած գերազանց գերը մոռնալով և կիրքի և նախանձի մատնուելով, իրենց իսկ ձեռով իրենց գործին արդիւնաւորութիւնը նուազեցնենին է: Եթէ կիրակոսի կաթողիկոսութեան երրորդ տարին չը ծագէին այն երկպառակութիւնք, որ պիտի պատմուին, Աղթամար հնապանդ կը մնայր ըստ ամենայնի, Կիլիկիա չէր նորոգուէր Կարապետով, և Ամենայն Հայոց հայրապետութիւնը կը վայելէր էջմիածնի մէջ այն բարձր և անարգել իրաւասութիւնը, զոր վարեց քանի մը տարիներ առանց իրիք դժուարութեան:

ՊԱՏՄԱՍԵՐ

(Կը շարունակուի)